

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

## ԻՍԿ ԴՈՒՔ ՈՐՏԵՂ ԷԻՔ

Ինչպես հիմա ընդունված է ասել՝ խիստ լճացման տարի էր, 1969 թվականը: Ես չգիտեի, որ Պարույր Մելակը դիմում է տվել, որպեսզի իրեն ազատեն Հայաստանի գրողների միության քարտուղարը լինելու պատվից: Բայց որքան էլ չի սազում նրա լեզենդար կերպարին, ահավոր ընկճված ու հուսահատված էր եւ վիճելիս նույնիսկ երբեմն ջղագարության էր հասնում: Նրա մի գրքի տպագրությունը ձգձգվում հա ձգձգվում էր Մոսկվայում, իսկ «Եղիցի լույս» գիրքը Կենտկոմում ինչ-որ մեկի անկեզ պահարանում բանտարկված էր:

Պարույրին խելագարեցնում էր Կենտկոմի այդ աշխատողի, մյուս՝ ավելի բարձր համարվող ղեկավարների անտարբերությունը, անհոգությունը, անխղճությունը ոչ միայն իր կամ ավելի ճիշտ՝ ոչ թե իր, այլ մյուս գրչակից ընկերների ճակատագրի նկատմամբ, մտավորականության նկատմամբ, երկրի ցավերի, հոգսերի նկատմամբ:

Մի օր, ճիշտ նույն տրամադրության մեջ, ասաց.

- Գնանք մի տեղ, նստենք, խոսենք:

Գնացինք մի տեղ, նստեցինք: Ու Պարույրը հանկարծ հարցրեց.

- Հիմա ի՞նչ ես անում:

- Իբր թե չգիտես, - ասացի ես, - «Մարաթոն» վեպիս համար «Գրական թերթից» հեռացրեցին՝ վերադաս օրգանների բանավոր կարգադրությամբ: Եւ քանի որ չկարողացա իմ շահերը պաշտպանել, նշանակեցին հեղինակային իրավունքների պաշտպանության բաժանմունքի դիրեկտոր, որ պաշտպանեմ բոլոր գրողների շահերը:

Պարույրը տխուր ժպտաց.

- Էդ գիտեմ, - ասաց, - հարցնում եմ, թե հողամաստ՞ում ինչ ես անում:

- Ծառեր եմ տնկում, - աշխուժացա ես:

- Ապրե՛ս, - ասաց Պարույրը, - ծառեր տնկի, ծաղիկ ցանի՝ հատկապես մեխակ ու վարդ եւ դուրս արի աշխատանքից: Ես էլ եմ դիմում տվել: Աշխատանքից դուրս եմ գալու ու ծաղիկ աճեցնեմ: Գրքեր եմ ամել, կկարդամ, կսովորեմ, գյուղում մեխակ ու վարդ կցանեմ, կծախեմ՝ կապրենք:

Կարծեցի կատակում է, ծիծաղեցի.

- Դե լավ, էլի, Պարույր, դու ծաղիկ ծախո՞ղ ես:

- Իսկ ինչի՞ պիտի ես ծախեմ: Ես կաճեցնեմ, ծախողները կգան, հենց իրենք էլ կքաղեն այգուց ու կտանեն:

Հասկացա, որ հենց այնպես չի խոսում: Միրտը լցված է ու ինչ-որ բաներ է մտմտում՝ ի հեճուկս աշխարհի անարդարությունների: Հողին այդքան կպած՝ նա միաժամանակ զարմանալի ռոմանտիկ երեւակայություն ուներ: Մի երկու ամիս առաջ համոզեց Սարգիս Մուրադյանին, իր երեխաների կնքահայր Վազգենին ու ինձ, թե գնանք Ղափան: Ասաց կինոկոմիտեի նախագահը կարգադրել է, Ղափանի կինոցանցի «Վիլիսը» ինձ են վաճառելու չնչին գնով: Ասաց գնանք, Արտաշես, «Վիլիսը» կապենք քո ավտոմեքենայի պոչից ու բերենք Չանախչի: Թեև մենք պատկերացնում էինք, թե ինչ վիճակում կարող է լինել Ղափանի շրջանում գյուղից գյուղ կինոժապավեն հասցնող ավտոմեքենան, որը նույնիսկ արդեն «դուրս են գրել», բայց ո՞վ կարող էր Պարույրին մերժել: Գնացինք, հասանք Ղափան: Հասանք ու տեսանք, որ այդ գույնը զգած «Վիլիսը» նույնիսկ դողեր չունի եւ ուրեմն հնարավոր չէ տեղափոխել: Պարույրի տրամադրությունն ընկավ, բայց շրջկոմի քարտուղարը մխիթարեց, թե մի բեռնատարով մեքենան կուղարկի Չանախչի: Վերադարձի ճանապարհին ամեն ինչի մասին խոսում էինք, բայց, Պարույրին խնայելով, շրջանցում էինք կինոցանցի դուրս գրած չարաբաստիկ ու բազմաչարչար «Վիլիսը»: Պարույրը հաստատ զգաց մեր կեղծ բարեպաշտությունն ու զայրացած ասաց.

- Պահ, դողեր չունի՝ չունի, հերն էլ անիծած, կբերեմ՝ տրակտորի նման կքաշեմ ու կվարեմ հողամասը:

Արդեն մեզ ոչ ոք զսպել չէր կարող: Մինչև Երեւան քրքջում էինք եւ ամենից բարձր, իհարկե, քրքջում էր Պարույրը: Հազում էր, ծիծաղում էր, հազում էր ու մատներով սրբում արցունքները:

Այնպես որ, երբ ծաղիկ աճեցնելու մասին խոսեց՝ այս անգամ ամենայն լրջությամբ, ես տարակուսեցի:

- Է՛, դա մեզ սազական է՞, Պարույր ջան:

Պարույրը պայթեց.

- Տո, այսօր շատ ավելի ազնիվ գործ է ծաղիկ ծախելը, քան քո գրելը, եւ այն էլ գրել այն, ինչ նրանք են ուզում եւ ինչ նրանք են տպագրում: - Նա ցուցամատը դեպի վեր տնկեց: - Նրանց համար աշխատելը հիմա ամենաանպատվաբեր բանն է, իմացիր: Դրանք իրենց աթոռներին կառչած, վախից կուչ եկած մարդիկ են, որ իրենց հոր գերեզմանի վրա լաց լինելու թույլտվությունը Մոսկվայից են խնդրում: Ակադեմիայից են գալիս: Պատկերացնո՞ւմ ես, մեր հարեւան գիտնականները պատմությունը կեղծելով, լկտիաբար աղավաղելով փաստերը, ինչ ասես գրում են մեր դեմ, մեր կենսագրության, ճարտարապետական հուշարձանների, պատմության, լեզվի դեմ: Մեր գիտնականներն ուզում են պատասխանել նրանց, բայց ո՞վ չի թողնում, գիտե՞ս, մեր ղեկավարությունը: Մե՛ր կոչված: Ասում են՝ ամոթ է, մի իջե՛ք նրանց մակարդակին, մենք քաղաքակիրթ ժողովուրդ ենք, իսկ այդ թերուս, բայց հեռատես հարեւան գիտնականները հանգիստ նստած փաստաթուղթ են սարքում, հին աշխարհի նոր պատմությունն են գրում: Եւ նրանց ղեկավարությունը նրանց չի ասում, թե ամոթ է, մարդ էք, էլի...

Ես ցանկացա որեւէ կերպ շեղել Պարույրի դառը մտքերը.

- Դե լաւ, - ասացի, - բայց դրա պատճառով միտք ունի՞ աշխատանքից դուրս գալ: Չէ՞ որ քարտուղարի պաշտոնում ավելի շատ բան կարող էիր անել, քան հիմա...

Պարույր Մեակը թափահարեց գլուխը.

- Չէ, ես հասկացա, որ անգոր եմ պատի դեմ: Արա, ի՞նչ պատ, պատը մարդու կառուցածն է եւ ուրեմն կարելի է քանդել: Ընդհանրապէս կարող է քանդվել կանոնավոր բանը, մարդու սարքած բանը՝ տունը, տաճարը, եկեղեցին... Բայց սա մի այնպիսի անկանոն ու անհեթեթ կառուցվածք է, որ անհնարին է քանդելը: Հասկանալն ու քանդելը: Ժայռը, որ քանդեցիր, տակն ի՞նչ կմնա՝ ժայռեր...

Նորից ծխեց, հազաց, իրեն կորցրեց ծխի մեջ ու ձայնը փոքր-ինչ ցածրացնելով ասաց.

- Հիմա մեծ հանցագործություն է կատարվում երկրով մեկ, ահավոր, աղետալի հանցագործություն: Եւ մի օր պատասխան ենք տալու դրա համար: Անպայման: Մի օր գալու են ու հարցնեն, ամեն մեկից առանձին-առանձին պատասխան պահանջեն՝ իսկ դու որտե՞ղ էիր այդ ժամանակ: Դու ի՞նչ էիր անում, երբ նախապատրաստվում էր իրականացվում էր այդ ոճրագործությունը: Եւ առաջին հերթին ղեկավարներին են հարցնելու: Դրա համար էլ ես ու դու ալիբի պետք է ունենանք, ախպերս, զոնե իրավունք պիտի ունենանք ասելու, որ մենք այնտեղ չենք եղել, մենք ղեկավար չենք եղել, մասնակից ու ներկա չենք եղել: Տո, իսկի գրող էլ չենք եղել: Մենք ծաղիկ էինք աճեցնում այն ժամանակ...

Ասում էր դառնությամբ, ցավով:

Ողորմի քեզ, մեծ եղբայր, հազա՛ր ողորմի, որովհետեւ դու շատ-շատ ավելի հեռուն էիր տեսնում, քան մենք, եւ բյուրապատիկ լավ էիր հասկանում, թե ինչ է կատարվում այն ժամանակ եւ ինչ պիտի կատարվի հետո:

Այդ օրը իմ գրպանում երկու փաստաթուղթ կար: Այն ժամանակ ընդամենը տարօրինակ թվացող երկու թուղթ, որ ես ուզում էի ցույց տալ Մեակին: Բայց քանի որ նա չափից ավելի էր խոցված ու վրդովված, չցանկացա էլ ավելի պղտորել նրա հոգին: Հետո մի քանի անգամ փորձեցի հրապարակել դրանք, բայց հրատարակիչները լսել անգամ չուզեցին: Հիմա, օգտվելով հրապարակայնությունից՝ ներկայացնում եմ: Մեկը ծննդյան վկայական է՝ ՁԺ թիվ 318807, տրված 1951 թվականի հունվարի 17-ին, ըստ որի Մանուկյան Պավելը ծնվել է 1951 թ. հունվարի 15-ին, Ադրբեջանական ԽՍՀ Բասարգեչարի շրջանում: Իսկ մյուսը ցուցակ է, որտեղ մանրամասն գրված է, թե ինչպես է տարիներ շարունակ գրանցվել հայ երեխաների ծնունդը Վարդենիսի շրջանի Սովետակերտի սովխոզում. «Հովսեփյան Բորիս Ղարիբ-Օղլի, Գեւորգյան Սաթիկ Արմեն-կզի»: Եւ այսպես անվերջ՝ կզիներ եւ օղլիներ:

Ներեցեք, որ կրկնում եմ: Այն ժամանակ դա ամենաշատը տարօրինակ էր թվում եւ ծիծաղելի ու կարելի էր վերագրել գյուղխորհրդի աշխատողների սոցիոթոյանը: Բայց ադրբեջանցի որոշ իբր գիտնականների այն նորաթուխ տեսության ֆոնի վրա, թե հայերի մեծ մասը բռնի քրիստոնեացված թուրքեր են, այդ կզիներն ու օղլիները բոլորովին այլ երանգ էին ստանում: Մանավանդ, որ ծնվում էին ոչ թե Հայկական, այլ Ադրբեջանական ԽՍՀ Բասարգեչար-Վարդենիսի շրջանում:

Եւ այդ երանգը հետզհետե ավելի ու ավելի էր մգանում, երբ Հայաստանի հայկական ու խառը գյուղերից վերանում էին քահանաները եւ նրանց փոխարինելու էին գալիս շրջիկ մուլաները:

Իսկ մենք տեսնում էինք այդ ու քմծիծաղ տալիս: Տարօրինակ մարդիկ են, զարգացած սոցիալիզմի այս ծաղկուն դարում մուլաների են հավատում: Տարօրինակ մուլաներ են, շրջում են Հայաստանի աղբբեջանական գյուղերում ու ինչ-որ հավաքներ կազմակերպում, կրոնական ծիսակատարություններ են անցկացնում աղբբեջանցիաշատ շրջաններում, իրենց հայրենակիցներից պահանջում բազմանալ հանուն իսլամի փառքի տարածման...

Եւ այդպես էլ տարօրինակ թվացին մեր աչքին, մինչեւ որ խորհրդային աղբբեջանցիների մոլեռանդ ամբոխը հարձակում գործեց Սումգաիթ ինտերնացիոնալ քաղաքը իրենց հետ կառուցած խորհրդային հայերի տների վրա եւ սպանեց նրանց միայն այն պատճառով, որ հայ են: Միայն ու միայն նրա համար, որ հայ են:

Լինեիր հիմա, մեր սիրելի Պարույր, հաստատ կասեիր՝ «Դե եկ, վարդապետ, ու մի խենթանա»:

Իսկ մենք լռում ենք: Մենք խելացի, քաղաքակիրթ, համբերատար ժողովուրդ ենք: Եւ մեր մտավորականները առավել եւս: Մինչ մենք մտածում, տառապում, միջոցներ ենք փնտրում, թե ինչ կարելի է անել, որպեսզի այս ծանր օրերին գոնե նոր արյուն չթափվի հայ եւ աղբբեջանցի աշխատավոր մարդկանց հարեւանության ու բարեկամության հին կամուրջների վրա, աղբբեջանցի մտավորականների մի մասը պաշտոնական հավաք է կազմակերպում, հրավիրում սումգաիթյան ու կիրովաբադյան կոտորածների վետերաններին եւ մոլեռանդ ամբոխին գրգռում հայ ժողովրդի դեմ՝ բացահայտ կոչ անելով բառիս բուն եւ փոխաբերական իմաստով ռումբեր դնել այդ կամուրջների տակ:

Եւ մեկը մյուսի ետեւից պայթում են կամուրջները՝ ազգերի հաշտ ու խաղաղ գոյակցության համար պատասխանատու այրերի եւ կենտրոնական մամուլի, եթե ոչ անտարբեր, ապա սպասողական հայացքի տակ: Եւ Աղբբեջանի տարածքում ապրող հայերի օրհասական վիճակի համար ոչ ոք անհարմար չի զգում: Ոչ ոք չի անհանգստանում: Հավանաբար մտածում են, թե դարձյալ նույն խելացի, քաղաքակիրթ ու համբերատար ժողովուրդն է: Ամեն ինչ տարել է, սա էլ կտանի:

Բայց, չէ՛, թանկագին ընկերներ, չէ՛... Կյանքը փոխվել է: Վերակառուցում է երկրում, հրապարակայնություն եւ ժողովրդասիրություն:

Եւ որքան էլ կենտրոնական մամուլի որոշ մարմիններ եւ հեռուստատեսության «Ժամանակ» ծրագիրը փորձեն թաքցնել ճշմարտությունը եւ աղավաղել փաստերն ու իրական վիճակը, դա նրանց չի հաջողվի: Երբե՛ք: Որովհետեւ «Ժամանակ» ծրագրին հակառակ՝ իսկական ժամանակը փոխվել է: Եւ համոզված ենք, որ փոխվել է անվերադարձ:

Իսկ, եթե այդպես է, ինչպես մեր բանաստեղծ Պարույր Մեւակն էր ասում, գալու է մի օր, երբ բոլորը պատասխան են տալու հենց այս օրերին երկրում կատարվող մեծ հանցագործությունների համար, ժողովուրդների բարեկամության կեղծ լոզունգների սուտ հռչակման եւ նրանց հարաբերություններում տիրող հազար ու մի սուր բախումների պատճառները թաքցնելու, վարագուրելու, պաստառապատելու համար: Պետք է պատասխան տան հարյուրավոր մարդկանց թափված անմեղ արյան համար, իրենց հայրենի տներն ու

ծաղկուն այգիները մահվան սպառնալիքի տակ անտեր թողած հարյուր հազարավոր փախստական հայերի համար, մարդկանց ոտնահարված իրավունքների համար:

Եւ պատասխան պիտի տանք նաեւ մենք՝ հանրապետության մեծ ու փոքր ղեկավարները, մտավորականները, ժողովրդական դեպուտատները...

Որովհետեւ մեզ պետք է հարցնել, իսկ դո՞ւք, դուք որտե՞ղ էիք, երբ փորձում էին, արհամարհել, ծաղրել ձեր ժողովրդին, ոտնատակ անել նրա ազգային արժանապատվությունն ու մարդկային իրավունքները: Որտե՞ղ էիք դուք ձեր եղբայրների համար ճակատագրական, բախտորոշ այդ պահերին:

Եւ մենք, եթե իրոք մեր ժողովրդի զավակներն ենք, պետք է իրավունք վաստակենք ասելու՝ մեր ժողովրդի հետ էինք: Մենք ապրում էինք մեր ժողովրդի հետ, ժողովրդի ցավով: Նրա հետ սպասում էինք, հուսադրում իրար ու պայքարում միասին հանուն մեր արդար գործի հաղթանակի:

Եւ մեզանից ոչ ոք իրավունք չունի ասելու, թե ես այլիքի ունեմ, ես տեղում չեմ եղել եւ ծաղիկ էի աճեցնում:

Որովհետեւ մեր նախորդները, բառի բուն եւ փոխաբերական իմաստով, քանդել, ոչնչացրել են հանրապետության բոլոր ծաղկանոցներն ու ջերմոցները ու նաեւ տրորել, ապականել մարդկային ազնիվ ու գեղեցիկ հարաբերությունները:

Ուրեմն այսօր մենք իրավունք չունենք այլուրեքություն վկայակոչելու:

Եթե արժանապատվություն ունենք:

**ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՆՅԱՆ**